

**2018 թվականին ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից**



**իրականացված միջոցառումներ**

ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնում 2018 թվականին ուսումնական մասով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

**1) Վերապատրաստման դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար**

ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնում 2018 թվականին 90 խմբերի համար կազմակերպվել է 2013 ալ/ժամ (ծրագրով նախատեսված էր 1200 ալ/ժամ) ընդհանուր տևողությամբ վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել և թեստավորվել է 1635 հարկային և մաքսային ծառայող:

**2) Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների (նաև ԼՂՀ հարկային և մաքսային ծառայողների) և հարկ վճարողների համար**

Ուսումնական կենտրոնում 2018 թվականին հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպվել է 662 ալ/ժամ տևողությամբ ուսումնական 76 դասընթաց, որոնց մասնակցել է 1534 հարկային և մաքսային ծառայող, իսկ առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց համար կազմակերպվել է 709 ալ/ժամ տևողությամբ 53 դասընթաց, որոնց մասնակցել է 974 ունկնդիր:

**Այլ ուսումնական միջոցառումներ**

2018 թվականի ընթացքում Ուսումնական կենտրոնի հետ համատեղ անցկացվել է 14 ալ/ժամ տևողությամբ 5 միջոցառում, որոնց մասնակցել է 91 ունկնդիր (հարկային, մաքսային ծառայողներ):